Կարգապահական գործ թիվ 17191

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ. հուլիսի 24-ի թիվ 191 նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/139-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռուզաննա Մարգարյանին (արտոնագիր՝ 1990) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

22.11.2017թ. Պալատում մուտքագրվել է Վլադիմիր Ղազարովի **(այսուհետ նաև՝ Դիմող)** դիմումը, որում նշվել է, որ փաստաբան Ռուզաննա Մարգարյանը իր ներկայացուցիչն է եղել թիվ 11124916 քրեական գործով, որով ինքը եղել է տուժողի կարգավիճակում, և այդ գործով Շենգավիթ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում (քրեական գործ թիվ ԵՇԴ/0140/01/16) ներկայացրել է իր շահերը: Սակայն քրեական գործի նախաքննության և հետաքննության ընթացքում ինքն իր ներկայացուցչին ներկայացրել է եղելությունը և պնդել, որ հանցագործությունը կատարել է ոչ միայն գործով դատապարտված Ռուզաննա Ղալումյանը, այլ նաև Ռուզաննա Դադոյանը, ով հանդիսացել է միջնորդ, այսինքն՝ հենց նա է իրեն խաբել և իրենից գումարներ վերցրել: Մինչդեռ, փաստաբան Ռուզաննա Մարգարյանը ոչ միայն չի գործել օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան, այլև դատական նիստին շատ արագ համոզել է իրեն՝ պատճառաբանելով, որ գործն իր օգտին է, պետք չէ երկարացնել, որպեսզի ինքը համաձայնություն տա արագացված դատաքննություն կիրառելուն: Արդյունքում, ըստ Դիմողի, փաստաբանի ճնշման տակ ինքը տվել է համաձայնություն, և կիրառել է արագացված դատաքննություն, սակայն իրական

հանցագործը՝ Ռուզաննա Դադոյանը, մնացել է անպատիժ:

Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Ռուզաննա Մարգարյանին:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 22.12.2017թ. թիվ 484-Ա/ԿԳ-17191 որոշմամբ փաստաբան Ռուզաննա Մարգարյանի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերի և 4.2 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը պնդել է դիմումում նշված հանգամանքները, և պահանջել պատասխանատվության ենթարկել Պատասխանողին, ինչպես նաև պարտավորեցնել վերադարձնել իր կողմից վճարված գումարը, ինչպես նաև իր երկրորդ փաստաբան Տիգրան Սարգսյանին վճարած գումարը:

Խորհրդի նիստին Դիմողը վերահաստատել է իր դիրքորոշումը՝ ընդունելով նաև, որ Պատասխանողի գործողությունների հետևանքով ամբաստանյալը վերականգնել է իրեն պատճառված նյութական վնասի 3600 ԱՄՆ դոլարի մի մասը՝ 1000 ԱՄՆ դոլարի և 205.000 ՀՀ դրամի չափով:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

29.11.2017թ. Պալատում մուտքագրվել է Պատասխանողի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը.

Ռուզաննա Դադոյանի՝ ներկայումս դատապարտյալ Ռուզաննա Ղալումյանի հանցակիցը լինելու, Դիմողից գումարների հափշտակումը երկուսի նախնական համաձայնությամբ իրականացված լինելու, գումարը Ռուզաննա Դադոյանի կողմից ստացված լինելու փաստերի վերաբերյալ Դիմողի կողմից հաղորդում, բացատրություն և ցուցմունք չի տրվել քրեական գործի քննության ընթացքում, ինչը հաստատվում է վարույթի ընթացքում կայացված որոշումներով և մեղադրական եզրակացությամբ:

Պատասխանողը, վկայակոչելով արագացված դատաքննության իրականացման կարգը կանոնակարգող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ՔԴՕ**) 375.1 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթները, նշել է, որ դատաքննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելու իրավունքն օրենսդիրը կախվածության մեջ է դրել միայն դատախազի դրական դիրքորոշումից, առարկության իրավունք է վերապահել միևնույն գործով մի քանի ամբաստանյալի առկայության դեպքում՝

տվյալ ամբաստանյալներին, իսկ տուժողի դիրքորոշումն արագացված դատաքննության կարգ կիրառելու դեպքում օրենսդիրը չի նախատեսել: Տվյալ դեպքում մինչև դատաքննությունը Ռուզաննա Ղալումյանն իրացրել է արագացված դատաքննության կարգ կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իր իրավունքը, որի դեմ մեղադրողը չի առարկել: Իսկ դատարանը կայացրել է համապատասխան որոշում:

Պատասխանողը նշել է, որ ինքը, լավ իմանալով, որ Դիմողի դիրքորոշումը չի կարող նշանակություն ունենալ Ռուզաննա Ղալումյանի միջնորդության բավարարման կամ մերժման հարցում, չէր կարող և չի համոզել, որպեսզի Դիմողն իր իրավունքների շրջանակներից դուրս խնդրի վերաբերյալ դարական կամ բացասական կարծիք հայտնի, իսկ իր բառապաշարին նման արտահայտությունը հարիր չէ:

Պատասխանողը ներկայացրել է հիմնավորումներ իր կողմից Դիմողի շահերը նախաքննության ընթացքում պաշտպանելու ուղղությամբ կատարված գործողությունների մասին և նշել, որ իր գործողություններում փաստաբանի վարքագծի կանոնների խախտումները բացակայում են:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում հայտնել է հետևյալը.

Պալատի նախագահին հասցեագրված դիմումով Դիմողը Պատասխանողին մեղադրել է օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան չգործելու և արագացված դատաքննության կիրառմանը համաձայնության տալու համար իր նկատմամբ ճնշում գործադրելու մեջ, որպիսի պայմաններում Դիմողը համաձայնել է արագացված դատաքննության կիրառմանը: Սույն կապակցությամբ Դիմողը Պալատի նախագահին ներկայացրած բացատրության մեջ նշել է, որ ինքը որևէ կերպ չի համոզել Դիմողին չառարկել միջնորդության դեմ: Պատասխանողի բացատրությունը եղել է համոզելու, այլ ոչ՝ բացատրելու փաստի վերաբերյալ: Այսպես՝ Դիմողը Պատասխանողին մեղադրում է իրեն համոզելու մեջ, ինչից բխում է, որ միջնորդության վերաբերյալ Դիմողի և Պատասխանողի միջև եղել է քննարկում: Պատասխանողը Դիմողին բացատրել է արագացված դատաքննության կարգը և դրա հետևանքները: Ավելին՝ թիվ ԵՇԴ/0140/01/16 գործով 01.03.2017թ. դատավճռում արձանագրված է, որ. «տուժողը և իր ներկայացուցիչը միջնորդության դեմ չառարկեցին»: Դիմողի դիմումը և դատավճիռը հաստատում են այն փաստը, որ Պատասխանողն իր վստահորդին բացատրել է, որ նա իրավունք ունի առարկել կամ չառարկել միջնորդության դեմ հատկապես այն դեպքում, երբ դատարանը դատական նիստի ընթացքում ճշտել է տուժողի և նրա ներկայացուցչի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ: Պատասխանողը նշել է, որ իր և Դիմողի միջև հարցի քննարկում եղել է նույնիսկ նախքան դատական նիստը դատարանի սրահում, երբ Պատասխանողի, Դիմողի և դատախազի ներկայությամբ մեղադրյալի պաշտպանը հայտնեց, որ նման միջնորդություն է ներկայացնելու, և Պատասխանողը Դիմողին բացատրեց դրա հետևանքները: Արդյունքում Դիմողը, հասկանալով, որ արագացված դատաքննության դեպքում վկաներ չեն հրավիրվելու, ավելի քիչ թվով նիստեր են նշանակվելու, ինչի հետևանքով ավելի արագ դատավճիռ կկայացվի, և գործի քննությունը կավարտվի, քան արագացված դատաքննություն չկիրառելու դեպքում, ուրախությամբ համաձայնեց՝ մանավանդ հաշվի առնելով այն, որ մեղադրյալն ընդունում է իր մեղքը և վնասի

հատուցման պարտականությունը: Միջնորդությունը ներկայացնելիս պաշտպանը հայտնեց, որ իր պաշտպանյալը դատարանից ժամանակ է խնդրում վնասը մինչև հաջորդ դատական նիստը փոխահատուցելու համար: Նման հայտարարությունն ավելի ոգևորեց Դիմողին, քանի որ նրա գերագույն խնդիրը կրած նյութական վնասի վերականգնումն էր: Այս հանգամանքները հաշվի առնելով և Պատասխանողի հետ խորհրդակցելով՝ Դիմողը հայտնել է դատարանին, որ չի առարկում միջնորդության դեմ, Պատասխանողը ևս հայտնել է նույն դիրքորոշումը:

Ըստ Պատասխանողի՝ վերը շարադրվածը հիմնավորում է այն, որ ինքը Դիմողին բացատրել է արագացված դատաքննության կարգն ու հետևանքները, սակայն որևէ կերպ չի համոզել հայտնել կոնկրետ դիրքորոշում, այսինքն՝ չառարկել: Միջնորդության դեմ չառարկելը եղել է Դիմողի որոշումը, որի հետ Պատասխնողը համակարծիք է եղել: Միջնորդության դեմ չառարկելուց հետո Դիմողը երբևէ չի դժգոհել, որ արագացված դատաքննություն կիրառելը սխալ էր, որ դա խախտել է իր որևէ իրավունք, հակասել է իր շահերին: Ավելին՝ հետագայում տեսնելով, որ գործի քննությունը երկարում է, նշանակվում են մի քանի դատական նիստեր, Դիմողը դժգոհել է՝ ասելով, որ ինքը հույս ուներ, որ արագացված դատաքննության դեպքում գործն ավելի արագ կքննվի, եթե հիմա են այսքան նիստեր նշանակվում, ի՞նչ կլիներ, եթե դատարանն ընդհանուր ընթացակարգով գործը քններ: Այսինքն՝ միջնորդության դեմ չառարկելու տուժողի դիրքորոշման ձևավորման հարցում նշանակություն է ունեցել գործի հնարավորին արագ քննության և մեղադրական դատավճռի կայացման ակնկալիքը: Ամեն դեպքում Պատասխանողը Դիմողին ցուցաբերել է բարեխիղճ իրավաբանական օգնություն՝ բացատրելով նրան արագացված դատաքննության հետևանքները, կարգը, սակայն որևէ ճնշում չի գործադրել նրա վրա իր դիրքորոշման հարցում, ինչպես ինքը պնդում է:

Ըստ Պատասխանողի՝ վերոգրյալ փաստերի վկայակոչմամբ՝ հիմնավորվում է, որ Պատասխանողի գործողություններում Դիմողին մասնագիտական օգնություն տրամադրելիս բացակայել են Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերով և 4.2 կետով սահմանված խախտումները:

Խորհրդի նիստում Պատասխանողը հայտնել է, որ Դիմողն ըստ էության իրեն մեղադրում է երկու բանում: Առաջինը՝ քրեական գործում որպես վկա ներգրավված Ռուզաննա Դադոյանը հանդիսացել է խարդախության հոդվածով հանցակից և պետք դատապարվեր, երկրորդ՝ իբր Պատասխանողը Դիմողին համոզել է, ճնշել, ստիպել, որպեսզի արագացված դատաքննության կիրառման միջնորդության դեմ չառարկի: Երկու մեղադրանքն էլ, ըստ Պատասխանողի, հիմնազուրկ են և առարկայազուրկ՝ հետևյալ նկատառումներով:

Պատասխանողի խոսքով, ինքը գործում ներգրվավվել է նախաքննության փուլից որպես տուժողի ներկայացուցիչ: Քրեական գործը հարուցվել է 2016թ. ապրիլին: Պատասխանողին լիազորագիրը տրվել է 18.08.2016թ.: 2016թ. օգոստոսի 22-ին Պատասխանողը դիմել է դատախազին, քանի որ նախքան Պատասխանողին դիմելը Դիմողը չի ունեցել փաստաբան և գործի հարուցումից հետո՝ 4 ամսվա ընթացքում որևէ քննչական գործողություն չէր կատարվել, և Դիմողն ընդհանրապես տեղյակ չէր գործի ընթացքից,վարույթն իրականացնող մարմնի կողմից նրան որևէ տեղեկատվություն չէր տրամադրվել, և Դիմողն ուներ փաստաբանի կարիք: Պատասխանողի կողմից

դատախազին դիմելուց հետո վերջինս պահանջել է քննիչից գործի նյութերը և 15.09.2016թ. տվել է գրավոր ցուցում կատարել քննչական համապատասխան գործողություններ, Պատասխանողին ներգրավել որպես տուժողի ներկայացուցիչ: Դրանից հետո շատ արագ կատարվել են համապատասխան քննչական գործողություններ. կատարվել է առերեսում, Պատասխանողը ճանաչվել է տուժողի ներկայացուցիչ, Պատասխանողն ու Դիմողը ծանոթացել են փորձաքննության եզրակացությանը և որոշումներին:

Թիվ 11124916 քրեական գործը հարուցվել էր Դիմողի հաղորդման հիման վրա և ինչպես հաղորդմամբ այնպես էլ ցուցմունքով Դիմողը չի հայտնել, որ Ռուզաննա Դադոյանը հանդիսացել է Ռուզաննա Ղալումյանի հանցակիցը: Դիմողը իրեն չի հայտնել այդ մասին նախաքննության և դատաքննության ընթացքում: Ռուզաննա Դադոյանը նախաքննության ընթացքում սուտ բացատրություն է տվել, որ ինքը տեղյակ է եղել, որ Դիմողը Ռուզաննա Ղալումյանին փոխառությամբ 1000 դոլարը տվել է 20 տոկոս տոկոսադրույքով, սակայն հետագայում կեղծ բացատրությունը չի հաստատել՝ հայտնելով վարույթն իրականացնող մարմնին, որ ցուցմունքը տվել է Ռուզաննա Ղալումյանի խնդրանքով: Որից հետո որոշում է կայացվել վաշխառության հոդվածով Դիմողի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել:

Պատասխանողին և Դիմողին տրամադրվել է վկա Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, նաև որոշում, որով ավելացել է մեղադրանք ծավալը՝ սուտ մատնության հոդվածով Ռուզաննա Ղալումյանի նկատմամբ: Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը բողոքարկելու հանձնարարություն Պատասխանողը Դիմողից չի ստացել:

Արագացված դատաքննության մասով ևս, ըստ Պատասխանողի, Դիմողի մեղադրանքն անհիմն է, քանի որ Ռուզաննա Ղալումյանը լրիվ ծավալով ընդունել է իր մեղքը և ամբողջ ծավալով հասցված վնասը: Նախքան դատական նիստը միջանցքում արդեն պարզ էր դարձել, որ ներկայացվելու է արագացված դատաքննության միջնորդություն, Պատասխանողը ոչ թե համոզել այլ բացատրել է արագացված դատաքննության հետևանքները: Բացի այդ, միջնորդություն էր ներկայացվել դատական նիստը հետաձգել մինչև հաջորդ դատական նիստը Դիմողին պատճառված վնասը՝ գումարն ամբողջությամբ վերականգնելու համար, ինչը Պատասխանողին դուր էր եկել, դա նրա շահերին չէր հակասում, ուստի՝ Դիմողը, ինչպես նաև Պատասխանողը նշված միջնորդության դեմ չեն առարկել: Առավել ևս՝ Պատասխանողի ջանքերով Պատասխանողի և Ռուզաննա Ղալումյանի միջև հանդիպումներ են կազմակերպվել, Պատասխանողը Ռուզաննա Ղալումյանին բացատրել է, որ վնասը հատուցելու դեպքում դա կդիտվի մեղմացուցիչ հանգամանք և դրականորեն կազդի իր պատժաչափի և պատժի կրման կարգի վրա: Հակառակ դեպքում՝ Պատասխանողը Դիմողին բացատրել է, որ քանի որ ամբաստանյալը գույք չունի, հետագայում նրանից չեն կարողանալու վնասի հատուցում ստանալ: Պատասխանողի համոզման աշխատանքների արդյունքում ամբաստանյալը Դիմողին պատճառված վնասը մասնակիորեն հատուցել է՝ 1000 ԱՄՆ դոլարի և 220.000 ՀՀ դրամի չափով: Դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ՝ երկու տարի երեք ամիս ժամկետով ազատազրկում, ուստի՝ Դիմողի պնդումը վերաքննիչ բողոք ներկայացնելու վերաբերյալ ընդունելի չէ: Ընդ որում, ամբաստանյալը թոշակառու է,

հիվանդ, զոհված ազատամարտիկի այրի, ուստի՝ իրենք մտավախություն ունեին, որ դատարանը կարող է պատիժը պայմանականորեն չկիրառել, սակայն դա չեղավ, և դատական ակտն առավելագույնս Դիմողի օգտին էր, և Պատասխանողի աշխատանքի արդյունքն էր: Դատավճռի դեմ պաշտպանության կողմը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Այդ ժամանակ ևս Պատասխանողը ներկայացրել է Դիմողի շահերը, պայքարել, որպեսզի վերաքննիչ դատարանը որոշում չկայացնի դատական ակտը բեկանելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին, ինչը վերաքննիչ բողոքի հիմքն էր: Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է ուժի մեջ:

Ըստ Պատասխանողի՝ իր և Դիմողի հակասությունն սկսվել է այն ժամանակ, երբ Դիմողը ցանկանում էր, որպեսզի ներկայացվի վճռաբեկ բողոք, ինչին ի պատասխան՝ Պատասխանողը հայտնել էր, որ դա հնարավոր չէ, քանի որ իրենք չեն կարող բողոքարկել իրենց օգտին կայացված դատական ակտը, բացի այդ, նրանք նույն հիմքերով դատավճիռը չեն բողոքարկել վերաքննիչ դատարան, ինչը բացառում է այժմ այդ հիմքով վճռաբեկ դատարան դիմելը, և, ընդհանրապես դա աբսուրդ է: Այնուհետև Դիմողը դիմել է այլ փաստաբանի, ով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Պատասխանողի նշած հիմքով վճռաբեկ դատարանի կողմից թողնվել է առանց քննության: Պատասխանողը գտնում է, որ Դիմողն իրենից գումարը հետ է ուզում, որովհետև ամբաստանյալը հրաժարվել է գումարի մնացյալ մասը վճարել, իսկ քանի որ նա գույք չունի իրենից գումար բռնագանձել հնարավոր չէ, երևի վճռաբեկ բողոքը գրած փաստաբանը նույնպես հրաժարվել է գումարը վերադարձնել, դրա համար այժմ Դիմողը նման պահանջ է ներկայացնում Պատասխանողին:

Բացի այդ, ըստ Պատասխանողի, ինքը նաև քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան Դիմողին պատճառված վնասի՝ ամբաստանյալի կողմից չհատուցված մասը վերականգնելու պահանջով, ինչպես նաև գործը դատական ատյաններում գտնվելու փուլում Դիմողի պնդմամբ, Դիմողի անունից դիմում է կազմել և ներկայացրել իրավապահ մարմիններին՝ Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու պահանջով:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 27.02.2018թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը գտել է, որ Պատասխանողի արարքում բացակայում են Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերի և 4.2 կետի պահանջների խախտման հատկանիշները:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 01.03.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 24.07.2018թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Պատասխանող Ռուզաննա Մարգարյանը ԵՇԴ/0140/01/16 քրեական գործով նախաքննության և դատական քննության ժամանակ (առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում) հանդիսացել է գործով տուժող Դիմող Վլադիմիր Ղազարովի ներկայացուցիչը:
   Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, բացատրությամբ, Պատասխանողի բացատրություններով, կարգապահական գործում առկա նշված քրեական գործի նյութերով:
2. ԵՇԴ/0140/01/16 քրեական գործով առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններն ամբաստանյալ Ռուզաննա Ղալումյանի նկատմամբ կայացրել են մեղադրական վերջնական դատական ակտեր, որոնց արդյունքում ամբաստանյալը դատապարտվել է ազատազրկման:
   Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, բացատրությամբ, Պատասխանողի բացատրություններով, www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում հրապարակված տվյալներով:
3. Ամբաստանյալ Ռուզաննա Ղալումյանը մասնակիորեն վերականգնել է Դիմող Վլադիմիր Ղազարովին պատճառված նյութական վնասը:
   Նշված փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած բացատրությամբ, Պատասխանողի բացատրություններով,:
4. Պատասխանող Ռուզաննա Մարգարյանը քաղաքացիական հայց է ներկայացրել դատարանում Դիմող Վլադիմիր Ղազարովին պատճառված վնասի չհատուցված մասը վերականգնելու պահանջով:
   Նշված փաստը հաստատվում է Խորհրդի նիստում Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով,:
5. Թիվ 11124916 քրեական գործը հարուցվել էր Դիմողի հաղորդման հիման վրա և ինչպես հաղորդմամբ, այնպես էլ՝ ցուցմունքով Դիմողը չի հայտնել, որ Ռուզաննա Դադոյանը հանդիսացել է Ռուզաննա Ղալումյանի հանցակիցը: Դիմողը Պատասխանողին չի հայտնել այդ մասին նախաքննության ընթացքում, այլ հայտնել է դատաքննության ընթացքում:
   Նշված փաստը հաստատվում է Խորհրդի նիստում Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով:

6. Պատասխանողը Դիմողից չի ստացել Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը բողոքարկելու հանձնարարություն:
   Նշված փաստը հաստատվում է Խորհրդի նիստում Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով
7. Գործը դատական ատյաններում գտնվելու փուլում Դիմողի պնդմամբ, Դիմողի անունից Պատասխանողը դիմում է կազմել և ներկայացրել իրավապահ մարմիններին՝ Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու պահանջով:
   Նշված փաստը հաստատվում է Խորհրդի նիստում Դիմողի և Պատասխանողի ներկայացրած բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Ռուզաննա Մարգարյանը փաստաբան է հանդիսանում 28.11.2015թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Ռուզաննա Մարգարյանի նկատմամբ 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերի և 4.2 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ *Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.3 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:*

Կանոնագրքի 4.2 կետի համաձայն՝ *փաստաբանը վստահորդի շահերը ներկայացնելիս պետք է օգտվի արդար դատաքննության հնարավոր միջոցներից և իր հերթին նպաստի դատավարության արդար իրականացմանը:*

Իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակությունում փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Իրականացնելով իրավապաշտպան գործունեություն և հանդիսանալով նաև արդարադատության իրականացմանը նպաստող քաղաքացիական հասարակության սուբյեկտ՝ փաստաբանն ունի կրկնակի պարտականություն՝ դրսևորել առավելագույն ջանասիրություն և բարեխղճություն իր վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս և նպաստել դատարանի կողմից արդարադատության գործառույթի պատշաճ իրացմանը:

Փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը դրսևորվում է երկու ուղղությամբ՝ գիտելիքահեն արհեստավարժության և գործնական պարկեշտության: Փաստաբանը վստահորդի շահերը լավագույնս ներկայացնելու և պաշտպանելու համար պարտավոր է ունենալ գործի բարդությանը համապատասխանող մասնագիտական գիտելիքներ տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, ինչպես նաև գործնական հարթությունում գործադրել առավելագույն ջանքեր, իրականացնել բոլոր անհրաժեշտ իրավական և փաստացի գործողությունները վստահորդի համար ցանկալի արդյունքի հասնելու համար: Սույն համատեքստում փաստաբանը պետք է պարբերական կապի մեջ լինի իր վստահորդի հետ, վերջինիս հետ համաձայնեցնի գործի ընթացքի և ելքի վրա ազդեցություն ունեցող հարցերում որդեգրվող դիրքորոշումները: Միևնույն ժամանակ փաստաբանի մասնագիտական անկախությունը պահանջում է վստահորդի հանձնարարության կատարման գործնական-օպերատիվ հարթությունում փաստաբանի ինքնուրույնություն անգամ իր վստահորդի հետ հարաբերություններում, քանի որ փաստաբանը տիրապետում է հատուկ իրավաբանական գիտելիքների և հմտությունների և պետք է ունենա դրանց կիրառման վերաբերյալ որոշում ընդունելու և դրա համար պատասխանատվություն կրելու մենաշնորհ: Ուստի՝ վստահորդը պետք է հնարավորություն տա փաստաբանին գործելու ողջամտության սահմաններում ինքնուրույն՝ կայացնելով մասնագիտական որոշումներ՝ պայմանով, որ գործում է՝ ի շահ վստահորդի, և փաստաբանի ձեռնարկած իրավական և փաստական միջոցները համապատասխանում են հանձնարարության նպատակին և դրանով պայմանավորված՝ վստահորդի ակնկալիքներին:

Ամերիկայի փաստաբանական ասոցիացիայի Մասնագիտական վարքագծի մոդելային կանոնների 1.3 կանոնի մեկնաբանության համաձայն՝ *ունենալով ի շահ վստահորդի գործելու և բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելու պարտականություն՝ փաստաբանը, այդուհանդերձ, կաշկանդված չէ վստահորդի կողմից ակնկալվող ցանկացած օգուտով: Փաստաբանը պետք է օգտվի մասնագիտական հայեցողության իրավունքից՝ որոշելու, թե ինչ միջոցներով պետք է հասնի առաջադրված նպատակին (…):*

Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնագրքի 2.1.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանի շատ պարտականություններ պահանջում են նրա բացարձակ անկախությունը: (…) Հետևաբար փաստաբանը պարտավոր է խուսափել իր անկախության որևէ խախտումից և չստորադասել իր մասնագիտական գործունեության*

չափորոշիչները վստահորդին, դատարանին կամ երրորդ անձանց հաճոյանալու համար:

Հետևաբար, փաստաբանության ինստիտուտի հանրային վարկանիշն ու հեղինակությունը, ինչպես նաև կոնկրետ փաստաբանի մասնագիտական համբավը ոչ միայն չպետք է ստորադասվեն ի շահ վստահորդի գործելու պարտականությանը, այլև վստահորդի շահերն սպասարկելիս փաստաբանի կողմից իր կարգավիճակի այս երկու ուղղության ողջամիտ համադրության արդյունքում է, որ կարելի է փաստել փաստաբանի մասնագիտական բարեխղճության պարտականության գործնական իրացումը: Մասնավորապես, վստահորդի այնպիսի հանձնարարականներ, որոնք հակասում են օրենսդրությանը, ակնհայտ աննպատակահարմար են կամ իրավական առումով անհնարին փաստաբանի կողմից ենթակա չեն կատարման:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճության և արհեստավարժության պարտականության իրացումը պետք է որոշվի՝ ելնելով յուրաքանչյուր գործի հանգամանքներից, քանի որ իրավական խնդիրների բազմազան բնույթը յուրաքանչյուր դեպքում պայմանավորում է փաստաբանի վարքագծի բովանդակությունը:

Սույն դեպքում Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանող Ռուզաննա Մարգարյանը եղել է քրեական գործով տուժող և սույն կարգապահական գործով Դիմող Վլադիմիր Ղազարովի ներկայացուցիչը: Քրեական գործը վերաբերում է խարդախությամբ Դիմողից 3600 ԱՄՆ դոլարի հափշտակությանը: Պատասխանողի ներկայացուցչության պայմաններում կատարվել են անհրաժեշտ դատավարական գործողություններ վստահորդի շահերի պաշտպանության ուղղությամբ, և քրեական գործի նախաքննության ու դատաքննության արդյունքներով՝ ամբաստանյալ Ռուզաննա Ղալումյանը դատապարտվել է ազատազրկման, իսկ Դիմողին պատճառված նյութական վնասը նաև Պատասխանողի գործողությունների հետևանքով ամբաստանյալի կողմից մասնակիորեն հատուցվել է: Վնասի մնացյալ մասով Պատասխանողի կողմից դատարան է ներկայացվել քաղաքացիական հայց, որի հիման վրա ընթանում է քննություն:

Խորհուրդը գտնում է, որ գործի քննությամբ Դիմողի կողմից չի ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեր Պատասխանողի մասնագիտական վարքագծի կանոնների խախտում թույլ տալու հանգամանքը: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ գործը դատական ատյաններում գտնվելու փուլում Դիմողի պնդմամբ, Դիմողի անունից Պատասխանողը դիմում է կազմել և ներկայացրել իրավապահ մարմիններին՝ Ռուզաննա Դադոյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու պահանջով:

Խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ գործով Դիմողի՝ որպես տուժողի հիմնական նպատակը պատճառված գույքային վնասի հատուցումն է: Վերջինս կարող էր իրացվել, եթե քրեական գործի նախաքննությամբ և դատաքննությամբ հայտնաբերվեր և քրեական պատասխանատվության ենթարկվեր խարդախություն կատարած անձը: Սույն փաստը կհիմնավորեր Դիմողի գույքային պահանջը՝ հնարավորություն տալով քրեական գործի շրջանակներում կամ առանձին քաղաքացիական հայց հարուցել ամբաստանյալի նկատմամբ՝ պահանջելով իրենից հափշտակված գումարի բռնագանձում: Պատասխանողի կողմից Դիմողի շահերը ներկայացնելու արդյունքներով խարդախության մեղադրանքով ազատազրկման է դատապարտվել Ռուզաննա Ղալումյանը: Քրեական

գործի դատական քննության արդյունքում Ղալումյանը մասնակիորեն հատուցել է Դիմողին պատճառված գույքային վնասը, իսկ մյուս մասով Պատասխանողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցով քաղաքացիական դատավարության կարգով իրականացվում է քննություն:

Վերոնշյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը գործել է վստահորդի նպաստավոր շահերից, բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր վստահորդին, չի կատարել իր վստահորդի շահերին հակասող գործողություններ, օգտվել է արդար դատաքննության հնարավոր միջոցներից:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի գործողություններում առկա չէ 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերի և 4.2 կետի պահանջների խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Պալատի նախագահի 22.12.2017թ. թիվ 484-Ա/ԿԳ-17191 որոշմամբ փաստաբան Ռուզաննա Մարգարյանի (արտոնագիր՝ 1990) նկատմամբ Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.5.3 ենթակետերի և 4.2 կետի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:***
2. **Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Մելանյա Առուստամյան**

24.07.2018թ.
թիվ ԿԳ/139-Ա
ք. Երևան